Կարգապահական գործ թիվ 17086

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մարտի 20-ի թիվ 75-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/54-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արա Զաքարյանին (արտոնագիր՝ թիվ 314) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

01.08.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ՝ նաև Դատարան կամ Դիմող)** դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 26.07.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում կամ Դատական սանկցիա)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 26.07.2017թ. դատական նիստի ընթացքում փաստաբան Արա Զաքարյանը առանց նախագահողի թույլտվության, բանավեճի է բռնվել Դատարանի հետ, կատարել անզուսպ հայտարարություններ, պահանջել Դատարանից պարզաբանել նախկինում կայացված որոշումը՝ հավելելով, որ Դատարանն «ապատեղեկացված է»: Նշված վարքագիծը դրսևորելու կապակցությամբ փաստաբանը Դատարանի կողմից շուրջ երեք անգամ նախազգուշացվել է, սակայն, անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ՝ այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը՝ դրսևորելով անհարգալից վերաբերմունք Դատարանի նկատմամբ: Նշված վարքագիծը դրսևորելու կապակցությամբ Դատարանի կողմից որոշում է կայացվել կիրառել դատական սանկցիա՝ պատասխանտվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 01.09.2017թ. թիվ 259-Ա/ԿԳ-17086 որոշման հիման վրա փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

06.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Գոհար Հովհաննիսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

06.11.2017թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 07.11.2017թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 20.03.2018թ. ժամը 19:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Փաստաբան Արա Զաքարյանը ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով հանդիսանում է

ամբաստանյալ Վարուժան Ավետիսյանի պաշտպանը:

- ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 26.07.2017թ. դատական նիստին փաստաբան Արա Զաքարյանը ցանկացել է արտահայտվել նախագահող դատավոր Ա. Գաբրիելյանի կողմից իր նկատմամբ կիրառված դատական սանկցիայի վերաբերյալ՝ մասնավորապես, դատական կարգադրիչների կողմից իրեն զննության ենթարկելու և իր կողմից նախորդ դատական նիստին չներկայանալու վերաբերյալ, սակայն նախագահող դատավորը նրան թույլ չի տվել արտահայտվել, և երբ Արա Զաքարյանը շարունակաբար առարկել է նախագահողի գործողությունների դեմ, վերջինս որոշում է ընդունել Արա Զաքարյանի նկատմամբ նոր դատական սանկցիա կիրառելու մասին:

Նշված փաստերը հաստատվում են Որոշմամբ, դատական նիստի ձայնագրառման կրիչով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Արա Զաքարյանը փաստաբան է հանդիսանում 16.01.1999թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ առկա է 7 կարգապահական վարույթ՝ (6 ավարտված և 1 ընթացիկ վարույթ)՝)չհաշված սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 14.10.2015թ. թիվ ԿԳ/146-Ա որոշմամբ Պատասխանողի նկատմամբ կարգապահական վարույթը կարճվել է:

Խորհրդի 11.12.2015թ. թիվ ԿԳ/175-Ա որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարել համար: Նրա նկատմամբ կիրառվել է տույժ՝ նկատողություն: Տույժը մարված է:

Խորհրդի 06.05.2016թ. թիվ ԿԳ/70-Ա որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարել համար: Նրա նկատմամբ կիրառվել է տույժ՝ խիստ նկատողություն: Տույժը մարված է:

Խորհրդի 23.11.2016թ. թիվ ԿԳ/187-Ա որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջների խախտման համար: Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Տույժը մարված է:

Խորհրդի 06.02.2018թ. թիվ ԿԳ/10-Ա որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար: Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 06.02.2018թ. թիվ ԿԳ/11-Ա որոշմամբ Պատասխանողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար: Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումն ուժի մեջ չի մտել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է ենթարկվել (...) դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին,* և *դատական նիստում պահպանել կարգուկանոն:*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ Կանոնագիրքը և քրեադատավարական օրենսդրությունը փաստաբանի համար սահմանել են դատարանում սահմանված վարվելակերպի կանոններին ենթարկվելու, դատավորին հարգանքով վերաբերվելու, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին ենթարկվելու, դատական նիստում կարգուկանոն պահպանելու պարտականություն: Մինչդեռ, փաստաբանի՝ նման պարտականություն կրելը որևէ կերպ չի չեզոքացնում նրա հնարավորությունը՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Ուստի դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը գնահատելու և Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշները պարզելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել դատարանում փաստաբանի վարքագծի դրսևորումները, ներառյալ՝ դատարանի նկատմամբ դրսևորած գործողությունների, կատարված արտահայտությունների բնույթն ու բովանդակությունը՝ պարզելու համար, թե արդյոք փաստաբանը որոշակի վարքագիծ դրևորելով կամ արտահայտություններ կատարելով դուրս է եկել դատարանի դահլիճում արտահայտվելու ազատության և դատավորի գործողությունների դեմ առարկելու թույլատրելի շրջանակներից:

Սույն գործի հանգամանքներից հետևում է, որ դատարանը փաստաբան Արա Զաքարյանի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա, որը պայմանավորված է եղել

նրանով, որ պաշտպանը կատարել է անզուսպ հայտարարություններ, բանավեճի մեջ է մտել նախագահող դատավորի հետ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն, պաշտպանն՝ անտեսելով Դատարանի օրինական պահանջը, շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ՝ այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը:

Պալատի խորհուրդը դատական նախորդ սանկցիաներով փաստաբանի նկատմամբ կատարված նախազգուշացումների հիմքում դրված վարքագիծը քննարկման առարկա չի դարձնում, քանի որ փաստաբանն արդեն այդ վարքագծի համար ենթարկվել է դատական ներգործության միջոցների: Պալատի խորհուրդը միայն Պալատին դիմելու վերաբերյալ դատական սանկցիայի շրջանակներում է քննարկում փաստաբանի վարքագիծը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ դատարանում փաստաբանի կողմից բանավեճի մեջ մտնելը՝ իր վստահորդին իրավաբանական օգնություն տրամադրելու համատեքստում, թույլատրելի է: Պալատի խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը բոլոր դեպքերում պարտավոր է հարգանքով վերաբերվել դատարանի և դատավարության մյուս մասնակիցների հետ:

Սույն գործի շրջանակներում, հաշվի առնելով փաստաբան Արա Զաքարյանի բանավեճի պատճառները և դրան նախորդող իրադարձությունները, Պալատի խորհուրդը վերջինիս վարքագծում խախտում չի արձանագրում:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 01.09.2017թ. թիվ 259-Ա/ԿԳ-17086 որոշման հիման վրա փաստաբան Արա Զաքարյանի (արտոնագիր՝ թիվ 314) նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

20 մարտի 2018թ.
թիվ ԿԳ/54-Ա

ք. Երևան